

Ավարտական Յետազոտական Աշխատանք

Թեմա՝ Աշակերտների բանավոր խոսքի
զարգացումը՝ որպես կրթական կարիք, SRS
գործիքի օգնությամբ:

Աշխատանքի ղեկավար՝ Հասմիկ Բեյբուլթյան

Ոսուցիչ՝ Անի Խաչատրյան

Դպրոց՝ Մեծ Մասրիկի միջնակարգ

Բովանդակություն

- 1. Ներածություն**
- 2. Ուսուցման գործընթացի կազմակերպումը**
- 3. Բանավոր խոսքի զարգացման միջոցները**
- 4. Հետազոտական աշխատանքի կազմակերպումը**
- 5. Աշակերտների բանավոր խոսքի զարգացման խթանումը հետազոտական աշխատանք կատարելու ընթացքում**
- 6. Ինչպես է մարդը սովորում**
- 7. Ուսուցման մեթոդներ և հնարներ**
- 8. ՏՐՏ-ի կիրառումը անգլերենի դասաժամերին**

9.ՏՅՏ-ի կիրառման արդյունավետությունը դասապրոցեսում

10. Եզրակացություն

Ներածություն

Բանավոր խոսքի պատկանում է հոգեբանության ամենաբարդ ու սակավ ուսումնասիրված հիմնահարցերի թվին: Ուսուցման և մտածողության գործնաթացի կազմակերպումն իրականացվում է զգայական ճանաչողության և տրամաբանական մտածողության կապի պայմաններում: Այդ խնդիրը ծագել է դեռևս Հին Հունաստանում և ժամանակի ընթացքում ստացել որոշակի լուծում: Փիլիսոփայական ըմբռմամբ իմացությունը սկսվում է զգայականից, ընթանում է դեպի վերացական մտածողությունը: Նախ՝ ուսուցանվող նյութն է, դասավանդվող առարկայի բովանդակությունը, այնուհետև իրականության զգայական ընկալումը: Նյութին համապատասխան լինում է երեխայի մտածողությունը:

<<Մի՛ կարդացեք լավ գրքեր,- գրում է Դիմնետը,- դրա համար կյանքը չափազանց կարճ է, կարդացեք միայն լավագույնները>>: Ն. Մենչիսկայան, Պ. Ատուտովա հանգել են այն եզրակացության, որ դպրոցականների մոտ ուսուցման գործնաթացում գերազնահատվել է զննական ուսուցման դերը, որն էլ կաշկանդել է աշակերտների վերացական կարողությունների ու տրամաբանական

մտածողության զարգացմանը: Չեռավոր ժամանակներից դիտողական ուսուցումը եղել է մանկավարժության առաջավոր սկզբունքը՝ մեծապես նպաստելով սովորողների բանավոր խոսքի զարգացմանը: Դիտողական ուսուցումը վճռական դեր է խաղում երեխաների աշխարհընկալման ու վերացական մտածողության զարգացման գործում:

Ուսուցման գործընթացի կազմակերպումը

Ուսուցման գործընթացի ճիշտ կազմակերպումը պահանջում է զգայական իմացության և տրամաբանական մտածողության ներդաշնակում: Երեխայի իմացության աղբյուրն արտաքին աշխարհն է, ռեալ իրականությունը: Խորհրդավոր ու հրապույրներով լեցուն արտաքին աշխարհն իր հմայիչ գեղեցկություններով մշտապես իրեն է ձգում աշակերտին, նրբորեն ազդում նրա մտքի ու հոգու վրա: Աշակերտը օգտվում է հասկացություններից, օգտագործում խոսքը, վերլուծություններ, դատողություններ ու մտահանգումներ կատարում: Չտիրապետելով ճկուն մտածողության՝ աշակերտները ուսումնական նյութը վերարտադրում են հիմնականում այնպես, ինչպես մատուցվել է: Նյութի ընդլայնումը, բովանդակության հարստացումը, նոր բառապաշարի ներմուծումը անընդունելի են երեխաների համար: Նրանք վերարտադրում են այնպես, ինչպես ընկալվել է առաջին անգամ ուսուցչի պատմածով ու բացատրածով: Նշանակում է աշակերտը դեռ չի տիրապետում տրամաբանական մտածողության ձևերի և մտավոր գործառույթների ժամանակ դրսևորվում է կաղապարված մտածողություն:

Ուսումնական գործնառնությունը կազմակերպելիս, հաշվի առնելով իմացության զգայական և տրամաբանական աստիճանների սերտ կապն ու փոխապայմանավորվածությունը, ուսուցիչը պետք է ձգտի դրանց հարաբերակցության ապահովմանը: Իսկ դա առաջին հերթին հնարավոր է իրականացնել պրոբլեմային ուսուցման եղանակով: Պրոբլեմային առաջադրումը և առհասարակ պրոբլեմային ուսուցումը՝ որպես մտավոր գործունեություն կազմակերպման արդյունավետ եղանակ, կիրառություն պետք է ունենա կրտսեր դպրոցականի տարիներից: Տարիքային ուսուցմանը համապատասխան պրոբլեմային ուսուցման կազմակերպումը հնարավորություն կտա աշխուժացնել երեխաների միտքը շարժել հետաքրքրությունը և որոնումների ուղիով հանգել ինքնուրույն եզրակացության: Պրոբլեմային առաջադրումը և պրոբլեմային եղանակով ուսուցման կազմակերպումը պահանջում են իմացական բարձր կարողություն, դասավանդման առարկայի խոր համակողմանի իմացություն, մտավոր լարում, ընդհանրացման կարողություն, մանկավարժական վարպետություն:

Ուսուցումը իմացական բարձր գործունեություն է: Այն կազմակերպվում է մի շարք գործոնների ազդեցության պայմաններում, որոնց մեջ որպես մտավոր գործունեության ելակետ, որից սկսվում է բուն մտածողությունը, խնդրում է, երևույթի պարզաբանման պահանջը կամ պրոբլեմի առաջադրումը: Վերջինս տրամաբանական մտածողության սկիզբն է, որին հաջորդում են հետագա գործնառնությունները: Մտածողությունը սկսվում է որոշակի հարցից, անձանոթ խնդրից և այն ամենից ինչը փորձում է հասկանալ և յուրացնել սովորողը:

<<Մտածել մարդը սկսում է այն ժամանակ, -գրում է Ռուբինշտեյնը,-երբ նրա մեջ ինչ-որ բան ճանաչելու պահանջ է առաջանում:Մտածողությունը միշտ սկսվում է հիմնահարցից, խնդրից, զարմանքից կամ տարակուսից: Պրոբլեմային այդ իրադրությամբ որոշվում է անձի ներգրավումը մտավոր գործունեության մեջ, այն մշտապես ուղղված է որևէ խնդրի լուծման>> :

Ակտիվ մտածողությունը ծագում է այն ժամանակ, երբ ծագում է պրոբլեմը: Պրոբլեմի առաջացման ժամանակ կարևոր նշանակություն ունի խնդրի ճիշտ ձևակերպումը: Միևնույն խնդիրը լեզվական տարբեր ձևակերպումների ժամանակ մտածողական տարբեր պահանջներ կարող է առաջադրել: Նախընտրելի է պրոբլեմները մշակել նյութի ուսումնասիրության սկզբից: Այն առաջ կբերի ուշադրության լարում և կնպաստի վերլուծահամադրական մտքի զարգացմանը: Անհրաժեշտ է սովորողի առջև դնել որոշակի նպատակ, մշակել դժվարությունները հաղթահարելու կամք և նպատակին հասնելու ցանկություն մտածողության ցածր կուլտուրայի և տրամաբանական թերկրվածության իրավիճակը շատ նմանություն ունի լեզվական գրագիտության վիճակի հետ, ինչպես որ ճիշտ գրելու, խոսելու համար անհրա-ժեշտ է գիտենալ ու պահպանել տրամաբանության կանոնները, իզուր չեն ասում, որ տրամաբանությունը մտածողության քերականությունն է:

Ա. Վ. Սավենկովն ասել է, որ ուսուցումը պետք է լինի պրոբլեմային: Այն պետք է պարունակի հետազոտական գործունեության տարրեր, կրի անհատական ստեղծագործական բնույթ որոնումների կնիքը: Այդ դեպքու կրթությունը ոչ թե սոսկ վերարտադրողական բնույթ կկրի, այլ կվերածվի ստեղծագործական գործունեության: Նման

իրավիճակներում կաշխուժանա երեխաների շփումներն ինչպես հասակակիցների, այնպես էլ մեծահասակների հետ, և նրանց մեջ կձևավորվեն դրական կենսափորձ ու անձնական նոր որակներ:

Ոսուցման ժամանակակից մեթոդները նպաստում են սովորողների սոցիալական հմտությունների (հաղորդակցական, համագործակցական, ստեղծագործական և այլն) զարգացմանը սակայն կան բազմաթիվ հմտություններ, որոնք կարող են ձևավորվել արտադպրոցական և արտադասարանական աշխատանքների շրջանակներում:

Գաղտնի չէ, որ երեխաների հետաքրքրությունների աշխարհը լի է հազար ու մի <<ինչուներով>>, իրենց հետաքրքրող հարցերի պատասխանները: Այդ դեպքում եթե մեծերի կողմից դրսևորվում է խթանում ու աջակցություն, նրանք ոգևորությամբ ձեռնամուխ են լինում իրենց հարցերի պատասխանները հնարավորինս շատ ստանալու գործնթացին:

Բանավոր խոսքի զարգացման միջոցները

Դասընթացի կազմակերպման սկզբնական փուլում պետք է օգնել երեխաներին և ուղղորդել՝ ներգրավելով դասին: Նոր տպավորությունների անհազ ծարավը, հետաքրքրությունը, փորձ անելու և ճշմարտությունն ինքնուրույն բացահայտելու մշտական ձգտումը հատուկ է վառ երևակայությամբ օժտված և էներգիայով լեցուն երեխաներին: Ոստի ուսուցչից պահանջվում է այդ էներգիան ուղղորդել երեխաների այդ մեծ նպատակի իրականացմանը: Բանավոր խոսքի զարգացման համար անհրաժեշտ են հետևյալ պայմանները:

Ջամագործակցություն: Տրամաբանական մտածողության ունակությունների զարգացման ուղղությամբ աշխատանքները պետք է տարվեն անընդհատ և՛ դասապրոցեսում, և՛ արտադասարանական գործունեության ընթացքում: Դրանք կարող են լինել տրամաբանական խաղերի միջոցով:

Դրդապատճառ,(մոտիվացիա)- ուսուցիչն օգնում է աշակերտներին ինքնազարգացման ճանապարհին հետազոտական գործունեության մեջ տեսնելու իրենց ունակությունների դրսևորման հնարավորությունը:

Տարիքային առանձնահատկություն: Հետազոտությունը պետք է լինի հետաքրքիր և հնարավորինս իրականանալի: Ա. Ի. Սավենկովն ասում է. <<Երեխաների վզին փաթատած>> թեման, ինչքան էլ մեզ՝ մեծերիս, կարևոր թվա, անհրաժեշտ արդյունք չի ունենա: Երեխաին հետաքրքրող թեմա ընտրելու համար հարկավոր է լսել, ուսումնասիրել նրա հետաքրքրությունները: Դա բարդ, սակայն լրիվ իրագործելի մանկավարժական խնդիր է: Հետազոտական աշխատանքը պետք է սկսել դեռևս տարրական դպրոցից: Դրանք կարելի է զարգացնել խաղերի, տարաբնույթ աշխատանքների միջոցով, որոնք կակտիվացնեն երեխաների ստեղծագործական գործունեությունը: Դասարանի հետ անցկացված մարզողական աշխատանքները հնարավորություն կտան ծանոթանալու յուրաքանչյուր երեխայի հետազոտական հնարավորությունների ալգոլիթմին: Միաժամանակ պետք է երեխային սովորեցնել, թե որտեղից կարելի է ստանալ տեղեկատվություն:

Հետազոտական աշխատանքի կազմակերպումը

Ջետագոտական աշխատանքը շատ երկարաժամկետ չպետք է լինի, քանի որ երեխան շտապում է օր առաջ տեսնել իր աշխատանքի արդյունքը:

Նախընտրելի է աշակերտների մեջ առաջացնել հետաքրքրություն ուսման նկատմամբ՝ այն ավելի իրատեսական դարձնելու համար: Աշակերտները զննական պարագաների միջոցով պետք է կարողանան տրամաբանել, մտածել: Պտասխանները կարող են լինել բանավոր կամ նկարների, հենքային բառերի միջոցով, հարցեր առաջադրել, տալ մեկնաբանություններ, կատարել անդրադարձ: Տվյալ երևույթի կամ պրոբլեմի լուծման վերաբերյալ կարծիք հայտնել, կամ փոխել սեփական կարծիքը:

Այս դասարաններում խրախուսվում են հատկապես անհատական աշխատանքները, որոնք ցանկալի է ավարտել գիտագործնական համաժողովներով (հատկապես չորրորդ դասարանում): Երեխաների մասնակցությունը կհանդիսանա նրանց և ուսուցչի ուսումնահետազոտական գործունեության վերջնարդյունքը:

Թեման երեխայի համար պետք է լինի հետաքրքիր, ինքնատիպ, տեղեկատվական և անակնկալներ պարունակող: Ուսումնահետազոտական աշխատանքը պետք է համապատասխանի երեխայի տարիքային առանձնահատկությանը: Երեխան պետք է ընկալի հիմնահարցը և ներթափանցի դրա մեջ: Սովորողների հետազոտական գործունեության հաջողությունը հիմանկանում պայմանավորված է ուսուցչի աշխատանքի իմաստալից պլանավորմամբ: Ուսուցիչը պատրաստի գիտելիք հաղորդողից վերածվում է հետազոտական աշխատանքի կազմակերպիչի, օգնականի և ուղղորդողի: Նրա պարտականությունն է՝ օգնել աշակերտներին

հաղթահարելու տեխնիկական դժվարությունները,
վերահսկել կատարվող աշխատանքները՝ ապահովելով
աշխատանքային խմբերի կապը նաև արտաքին աշխարհի
հետ.

Ջետազոտական գործունեության ընթացքում սովորողները՝

! կսովորեն ինքնուրույն հասնել արդյունքի

! կանխատեսել նպատակին հասնելու ճանապարհին
առաջացած խնդիրները և դրանց լուծման ճանապարհները:

! կկարողանան աշխատել տեղեկատվական աղբյուրներով և
SՅՏ-ով:

! կկարողանան գնահատել իրենց և ընկերների աշխատանքի
արդյունքները:

! կձևավորեն տեղեկատվություն որոնելու և ընտրելու
սեփական գործունեության պլանավորման,
գործողությունների քայլաշարը մշակելու և վերլուծելու,
ցանկացած իրավիճակում կողմնորոշվելու հմտություններ:

Նպատակը.

! Ընտրված թեմայի ուղղությամբ հետազոտական
կարողությունների զարգացում:

! Աշակերտների տրամաբանական - իմացական ներուժի
խթանում:

! Հետազոտական և հաղորդակցական կարողությունների ու համագործակցային հմտությունների զարգացում:

! Տեղեկատվության վրա աշխատելու կարողությունների զարգացում:

! Հիմնախնդիրները ձևակերպելու, համակարգելու և դրանց լուծման ուղիները գտնելու հմտությունների զարգացում :

Արդիականությունը: Անձի ինքնուրույն և ստեղծագործ լինելու սոցիալական պահանջը կնպաստեն աշակերտների տրամաբանական կարողությունների զարգացմանը և կհարստացնեն կրտսեր դպրոցում առկա հետազոտական գործունեության փորձը:

Նպատակը: Աշակերտի ուսումնական, իմացական, ստեղծագործական ներուժի խթանում՝ հետազոտական ունակությունների կատարելագործման, հետազոտական հմտությունների ձևավորման միջոցով:

Նորարարությունը: Հետազոտական գործունեության գործընթացում՝ անհատական մոտեցման դրսևորում:

Խնդիրներ՝

! Ձևավորել տվյալներ հավաքելու, համակարգելու կարողություններ:

! Չարգացնել տեղեկատվությունը համադրելու, ընդհանրացնելու և ճանաչողական կարողությունները:

! Տարբեր տեղեկատվական աղբյուրներից օգտվելու կարողությունը զարգացնելը:

Աշակերտների բանավոր խոսքի զարգացման խթանումը հետազոտական աշխատանք կատարելու ընթացքում:


Այսօր աշակերտներից շատերի մոտ մարել է հետաքրքրությունը ուսման նկատմամբ, նրանցից շատերի համար դպրոց գալն ու դաս սովորելը դարձել է անհետաքրքիր: Միթե՞ ժամանակակից սերնդին չի հետաքրքրում նորը, գիտելիքի ձեռքբերումը, այսօրվա գիտատեխնիկական առաջընթացը: Իհարկե դա այդպես չէ: Հետևելով նրանց՝ նկատում ենք, որ նրանցից շատերը մեծ հետքեր էին դնում ուսումնասիրում բջջային հեռախոսների նոր հնարավորություններն ու շատ արագ էլ յուրացնում այն: Նրանցից յուրաքանչյուրն ուրախանում է իր կամ իր ընկերոջ ընտանիքում ձեռք բերած յուրաքանչյուր համակարգչի համար: Այդ դեպքում, իհարկե մեծ անելիք ունի յուրաքանչյուր ուսուցիչ: Նախ ուսուցիչն ինքը պետք է տիրապետի համակարգչային ծրագրերին, ինչպես նաև իմանա վեբ կայքերից օգտվելու պարզագույն կանոնները: Նրա խնդիրն է կարողանալ աշակերտներին ներգրավել տեխնոլոգիաների միջոցով տեղեկատվությունն ինքնուրույն որոնելու, վերլուծելու, համակարգելու, որը կօգնի աշակերտի մոտ զարգացնել ինքնուրույն, ստեղծագործական, վերլուծական, տրամաբանական մտածողությունը:

Ուսուցչի դերն այստեղ ուղղորդելն է, ճիշտ ճանապարհ ցույց տալ և աշակերտներին կողմնորոշել ինֆորմացիայի գլխապատույտ հոսքում: Աշակերտները ինքնուրույն կարող են նաև ստեղծել օրվա դասի թեմային համապատասխան ցուցադրական նյութեր: Դա կօգնի նրանց ավելի լավ յուրացնել տվյալ թեման, համակարգել ստացած գիտելիքները, ինչպես նաև կզարգացնի տրամաբանական

ստեղծագործական միտքը: Կկարողանա հետաքրքրություն
առաջացնել ուսման նկատմամբ: Միշտ էլ աշխատանքը
համակարգչի հետ շատ հետաքրքիր է:

Ինչպես է մարդը սովորում

Գիտության զարգացումը մեզ լավ հնարավորություն է տալիս
հասկանալու, թե ինչպես է տեղի ունենում սովորելու
գործընթացը: Դիտարկենք այն: Երբ արտաքին աշխարհից
տեղեկություն ենք ստանում, այն սկզբում առնչվում է մեր
կարճաժամկետ կամ աշխատանքային հիշողությանը:
Որպեսզի կարողանանք արտաքին աշխարհից տեղեկություն
ստանանք, մեզ պետք է ուշադրության կենտրոնացում:
Աշակերտներին բավականաչափ զբաղեցնում է նաև
սոցիալական ցանցերը: Մի խոսքով՝ սովորելու ժամանակ
շատ քիչ է մնում: Որպեսզի սովորելու գործընթացը
հնարավոր լինի, կրթության համակարգը պետք է փորձի
գրավել աշակերտների ուշադրությունը: Որպեսզի սովորելու
գործընթացը հնարավոր լինի, կրթության համակարգը պետք
է փորձի գրավել աշակերտների ուշադրությունը:



Մոռացված

Գիտելիքներ



Երկարաժամկետ
են

Այսպիսով՝ սովորելու հնարավոր դարձնելու առաջին քայլը ուշադրության կենտրոնացում է: Երբ աշակերտը կենտրոնացնում է ուշադրությունը, ուսուցանվող նյութը տեղափոխվում է աշխատանքային կամ կարճաժամկետ հիշողության մեջ: Մարդու կարճաժամկետ հիշողության հնարավորությունները սահմանափակ են, այսինքն՝ մարդը չի կարող միանգամից շատ բան սովորել: Ըստ գիտնականների՝ մարդը կարող է միանգամից սովորել լավագույն դեպքում 9-10 նոր բան: Որոշ գիտնականներ ավելի հոռետես են և համարում են, որ մարդը կարող է սովորել 4-5 նոր բան:

Այս հանգամանքը շատ կարևոր է, քանի որ մեր դասագրքերում, դասերի ժամանակ հաճախ ականատես ենք լինում իրավիճակների, երբ կարճ ժամանակում աշակերտներին փոխանցվում են մի քանի տասնյակ նոր բառեր և հասկացություններ: Մասնագետները խորհուրդ են տալիս նոր նյութը սովորեցնել կապակցված: Խորհուրդ է տրվում օգտագործել գծապատկերներ, պատմություններ, որպեսզի աշակերտները լավ կարողանան յուրացնել նյութը: Կարևոր է նաև նյութի կապակցված ուսուցում: Եթե ուսուցանում ենք անջատ փաստեր, ապա աշակերտները քիչ բան կարող են սովորել:

Այս առումով, որպեսզի աշակերտները ունենան մնայուն գիտելիքներ, պետք է ուսուցանվող նյութը կրկնելու, ամրապնդելու, կիրառելու, կապակցելու հնարավորություններ ընձեռվեն: Ընդ որում՝ դա պետք է արվի կանոնավոր և շարունակական ձևով: Այլ կերպ ասած՝ պետք է կարևորել ոչ միայն ուսումնական ծրագրի ընդգրկումը, այլ խորությունը: Ուսուցման գործընթացում ուսուցիչները հաճախ են օրինակներ օգտագործում, սակայն դրանց հետ կապված կարևոր է իմանալ երկու բան:

Առաջին՝ հաճախ ուսուցիչները բավարարվում են մեկ օրինակ բերելով. . .

➤ Եթե ուսուցիչը մեկի փոխարեն երեք օրինակ բերի, ապա նյութը հասկացող աշակերտների թիվը էապես կավելանա



Ուսուցման մեթոդներ և հնարներ

➤ Վերջին տարիներին հաճախ են հակադրում ուսուցման ավանդական և ինտերակտիվ մեթոդները, ուսուցչակենտրոն և աշակերտակենտրոն մոտեցումները: Ընդ որում՝ այդ հակադրումը կատարվում է այն համատեքստում, որ ինտերակտիվ և աշակերտակենտրոն մոտեցումները բացարձակապես լավն են, իսկ ավանդական և ուսուցչակենտրոն մոտեցումները՝ վատը: Յուրաքանչյուր հաղորդակցության մեջ կարևոր է սկիզբը: Այս առումով դասի հաջող սկիզբը շատ կարևոր է: Եթե ուսուցչին հաջողվի դասի առաջին րոպեներին գրավել աշակերտների ուշադրությունը, ապա դա էապես կնպաստի դասի արդյունավետ ընթացքին: Երեխաները սիրում են գաղտնիքներ: Գաղտնիքների առկայությունը մոտիվացնում է նրանց: Երեխաները ցանկանում են թույլ առաջ բացահայտել գաղտնիքը:

Գիտեմ, ուզում եմ իմանալ, սովորեցի (ԳՈՒՍ)

Դասը սկսելու շատ հայտնի հնար է նաև ԳՈՒՍ-ը: Դասակարգում ուսուցիչը գծում է M- ան աղյուսակ, որի ձախ սյունակում գրում է՝ գիտեմ, կենտրոնում ուզում եմ իմանալ, աջ սյունակում՝ սովորեցի բառերը: Դասի թեման հայտնելուց հետո ուսուցիչը դիմում է աշակերտին հետևյալ հարցերով.

Ի՞նչ գիտեք այս թեմայի մասին: Ապա լրացնում <<գիտեմ>> սյունակը:

Հաջորդիվ աշակերտներին հարցնում է՝ ի՞նչ եք ուզում իմանալ այս թեմայի մասին: Եվ լրացնում է << ուզում եմ իմանալ>> սյունակը: Դասի վերջում լրացվում է <<սովորեցի>> սյունակը:

Մտագրոհ:

Դասի մասնակցային սկիզբ ապահովող լավագույն մեթոդներից մեկը մտագրոհն է: Մտագրոհի միջոցով ուսուցիչը դասարանից հավաքում է մտքեր տվյալ թեմայի վերաբերյալ: Ընդ որում՝ մտագրոհի ժամանակ կարևոր է մտքերի քանակը: Կարևոր է նաև, որ աշակերտները առանց երկար մտածելու պատասխանեն ուսուցչի հարցին, որպեսզի ուսուցչի համար պարզ դառնա նաև այն սխալ պատկերացումները, որոնք թեմայի վերաբերյալ ունեն աշակերտները: Ուսուցիչն աշակերտներին առաջարկում է թղթի վրա գրել իրենց մտքերը և հանձնեն իրեն:

SՅՏ-ի կիրառումը անգլերենի դասաժամերին

Ուսուցչի դերն այստեղ ուղղորդելն է, ճիշտ ճանապարհ ցույց տալը և աշակերտների կողմնորոշել ինֆորմացիայի գլխապատույտ հոսքում: Աշակերտները կարող են նաև ինքնուրույն ստեղծել նաև օրվա դասի թեմային վերաբերող ցուցադրական նյութեր: Դա կօգնի նրանց ավելի լավ յուրացնել տվյալ թեման, համակարգել ստացած գիտելիքները, ինչպես նաև կգարգացնի տրամաբանական և ստեղծագործական միտքը: Աշակերտներին ներգրավելով նման աշխատանքներում՝ ուսուցիչը կկարողանա հետքերքրություն անաջացնել ուսման նկատմամբ: Միշտ էլ աշխատանքը համակարգչի հետ շատ հետաքրքիր է: Այսօր գոյություն ունի բազմաթիվ կրթական կայքեր, ֆորումներ, հավելվածներ և ծրագրեր, որոնք հենց այդ նպատակին են ծառայում: Տարեցտարի ավելանում են դիտակտիկ նյութերը, որոնք ստեղծվել են ՏՅՏ-ների օգնությամբ: Սակայն էլեկտրոնային գրադարանների, ինտերնետ կապի և այլ տեխնիկական սարքերի բացակայությունը դպրոցներում դեռևս մտահոգիչ խնդիր է: Իսկ առանց դրանց բնականաբար հետ ես ընկնում թե՛ կյանքի ռիթմից, և թե՛ ուսուցման որակի բարելավմանն ուղղված գործընթացներից:

SՅՏ-ի կիրառման արդյունքը դասապրոցեսում

1. Ուժեղացնում է աշակերտների մոտիվացիան

2. Հնարավորություն է տալիս օգտագործել թարմ ինֆորմացիա
3. Իրականացնել երկխոսություն ինֆորմացիայի աղբյուրի հետ
4. Խնայել ժամանակը
5. Հնարավորություն է տալիս դասարանին պարապմունքներն դարձնել ավելի հետաքրքիր
6. Ուսուցչին տալիս է տեխնոլոգիական մեծ պահուստ

Ներկայումս կան բազմաթիվ համակարգչային ծրագրեր և օնլայն գործիքներ, որոնք օգտագործելով անգլերենի ուսուցումը ավելի հանրամատչելի ու հետաքրքիր է դառնում:

Ինչպես անգլերենի դասը դարձնել ավելի հետաքրքիր

Օտար լեզվի դժվարընկալումը խոչընդոտում է առարկայի ուսուցանումը: Ուսուցչից մեծ ջանք է պահանջվում դասապրոցեսի մեջ ներգրավել ամբողջ դասարանը, զարգացնել նկատմամբ ակտիվությունն ու հետաքրքրությունը, օտար լեզվի դասը դարձնել ավելի արդյունավետ: Օտար լեզու չսովորելու պատճառների վերհանման նպատակով սովորողների հետ հարցում անցկացրեցի: Աշակերտների նշած պատճառները հետևյալն էին.

1. Աշակերտների հետաքրքրությունների շրջանակը մեծացել է. ինչը նրանց հետաքրքրում է նրանք կարող են

արագ գտնել համացանցում (ֆիլմեր, երաժշտություն, խաղեր. . .)

2. Նրանք չեն հասկանում, թե ինչպես կարելի է կիրառել գիտելիքը...

3. Ընկալման դժվարությունն են տեսնում առարկայի մեջ...

4. Բառերի ճիշտ արտասանության և թարգմանության դժվարությունը.

Բավարար արդյունք ունենալու նպատակով կատարել եմ տարբեր աշխատանքներ.

! Մեթոդների փոփոխություն

! Նոր հնարներ, ձևեր

! Հանձնարարություններ համացանցից

! Չրույցներ

! Համակարգչային թեստերի կիրառում, դասերի անցկացում PowerPoint ծրագրով

! Դասը սկսելուց առաջ մի քանի րոպե ուշադրության կենտրոնացում

Օտար լեզվի առարկայական չափորոշիչը սահմանում է, որ
◆ դպրոցականների բանավոր խոսքի զարգացումը անգլերենի դասավանդման հիմնական նպատակներից է:

Եզրակացուքյուն

Մասնագիտական զարգացման, ներդպրոցական մշակույթի զարգացման գործում Էական դեր ունեն ուսուցիչները, ովքեր վերջին տարիներին , մասնակցելով տարբեր ծրագրերի , հաջողությամբ յուրացրել և իրենց դասարաններում կիրառում են ուսուցման զարգացման տարբեր արդյունավետ մեթոդներ: Այսպիսով այսօր համաշխարհային սարդոստայնում կան բազմապիսի հնարավորություններ դասերը ավելի հետաքրքիր դարձնելու համար, երեխաների բանավոր խոսքը որպես կրթական կարիք զարգացնելու համար, կան բազմաթիվ նորարարական մեթոդներ, ֆորումներ և այլ գործիքներ: ՏՀՏ-ի հնարավորությունները բազմազան են և հետաքրքիր: Միայն թե անհրաժեշտ է տիրապետել և կիրառել դրանք: Ես կարծում եմ, որ այս բոլորը խթան կհանդիսանան աշակերտների բազմակողմանի գիտելիքների, լեզվի յուրացման, կիրառման գործում:

